Տիգրան Պասկևիչյանի պատմությունը պապիկի մասին, որն առանձնացվել է «Խորհրդային կյանքը բանավոր պատմություններում» գրքից: Գիրքը հասանելի է հետևյալ հղումով՝
https://epfarmenia.am/hy/document/Soviet-life-in-oral-histories

Ա.Գ. — Ինքը տենց ինքնու՞ս էր, թե ինչ-որ տեղ սովորել էր:

Տ.Պ. — Ինչ-որ վարպետի մոտ էր սովորել, երբ որ եկել էր Ռուսաստանից, ինչ-որ մեխանիկական գործարանում էր աշխատել, էդ վարպետի մոտ էր սովորել, ու տենց դառել էր: Դե հետո էլ էնքան շատ էր աշխատել, հերս իրա մոտ էր արդեն սովորել: Մեր տանը մենակ էդ գործի հետ ես կապ չունեմ: Որ ախպերս էլ մեքենաշինարար էր, հետո ինչ-որ ժամանակ, ասենք էն տարի- ներին, որ արտադրություն կար, զբաղվում էր էդ գործով: Իմ հորեղբայրս բան էր, ժիգուլիների... գլխավոր ինժեներ էր, բոլորը էդ գործի մեջ էին: Կլա- նային էր, էլի, էդ աշխատանքը: Ես չկայի դրա մեջ: Ես, օրինակ, հիմա, որ էս օրալ հիսթրի281 որ ասում են, էն ժամանակները հա ուզում էի պապիս ձայնա- գրեի, ինքը հա ասում էր՝ «հիմի չէ, հիմի չէ, հետո», տենց էլ հետո-ն չեկավ: Հետո ֆանտաստիկ պատմություններ ուներ, իրա հետ պատահած...: Բայց էդ ամենում հետաքրքիրը էն էր, որ 29 թե 30 թվին, էդ մեխանիկական գոր- ծարանում աշխատելուց, ինքը լինում ա էդ, դե բոլշևիկ էր ինքը, էլի, բանը, լինում ա էդ գործարանի պարտկոմը: Երբ որ Տրոցկին, որ արդեն Տրոցկին որ բան էին անում, էդ տրոցկիստականների դեմ շարժումը սկսվում ա, տենց ամբողջ կազմակերպությունը հեռացնում են, էդ թվում իրան: Մի քանի տարի հետո, դե հեռացրել-հեռացրել են, ու մեղադրում են, որ դուք տրոց- կիստ եք, ու քանի տարի հետո կանչում են, ասում են. «Թուղթ ու գրիչը վերց- րեք, գրեք, դալաթ ենք արել, բան, ձեզ հետ վերցնենք»: Բոլորը գրում են, ինքը չի գրում: Էս բոլորը ասում են. «Լսի, դու աննորմալ հո չես, երեք էրեխա ունես», էդ վախտ արդեն երեք էրեխա ուներ, «գլուխդ կուտեն, արա, գրի»:

«Ես տրոցկիստ չեմ էղել և ես իմ ձեռով չեմ գրի, որ ես տրոցկիստ եմ, ինչ ուզում են, թող անեն»: Բոլոր գրողներին 36-37 թվին տանում են, գնդակա- հարում են՝ իրանց գրածը հիմք ընդունելով: Ու իրա վրա հիմք չեն գտնում: Ֆանտաստիկ պատմություն ա, էլի: Ինքը ասում ա. «Չեմ էղել, ես իմ ձեռով գրեմ, որ էղե՞լ եմ: Չեմ գրի, կտանեն-կտանեն, հերն էլ անիծած»: Տենց ահավոր ինչ-որ կողով մարդ էր, էլի: Մի բան, որ թարսվում էր, ասում էր չէ, վերջացավ, ասենք: Կարար դա իրա համար էլ ճակատագրական լիներ, էլի: Կարող ա տենց զգուշավորությունով, որ բան չխոսար, բան չաներ, էդ բանե- րը կար:

Ես, օրինակ, հիշում եմ, որ 87 թվին Չարենցի 90 ամյակն էր, հորաքույրս մեր տանն ա, ինչ-որ հարթուկ ա անում, տելեվիզորով գնում ա նիստը, ու Վա- հագն Դավթյան, գրողների քարտուղար, չգիտեմ ինչ էր, իրա ելույթում ասում ա. «Եվ դահիճ Ստալինը սենց արեց, նենց արեց»: Հարթուկը հորքու- րիս ձեռքից ընկավ համարյա ոտին, մի կերպ հասցրեց փախցներ, վախից, մենք էլ կողքից խնդում ենք, էլի, 25-23 տարեկաններով, ասում ենք «էն ամեն ինչ փոխվել ա»: «Չի կարա», — ասում ա, — «հնարավոր չի էդ, չի կարա»: Արդեն 88-ին գնում էինք միտինգների, ինձ մի օր սենց կանգնացրին, ասում ա. «Ինչի՞ ես սպիտակ սառոչկա հագել, շոգ ա, էլի, թեթև սառոչկա հագի: Դու սպիտակ սառոչկայով, որ լինես, ԿԳԲ-ն նկատում ա, մուգ գույնի մի բան հագի, որ խառնվես»: Այ էս սենց բաներ կար: Բայց արդեն վերջին տարինե- րին հումոր, ըտենց, ասենք, ծիծաղում էինք մենք էդ բաների վրա: Բրեժնևի մահը նենց, ես ասեմ,

շատ կարևոր հանգրվան էր Սովետի: Բրեժնևը որ մեռավ, նենց ոնց որ ասիր, արա, նիուժելի հնարավոր ա սենց բան, ինձ թվում ա, որ 53-ին շատերի համար տենց էղել ա Ստալինի մահը, հետո 64, 74, տասնութ տարի նստած էր, հիմի ոնց որ Պուտինը մեռնի, այ սենց, քանի որ Պուտինը... ու դրանից հետո Անդրոպով, դրանից հետո Չեռնենկո: Անդրո- պովի ժամանակ շատ հետաքրքիր ժամանակ էր, ինչ-որ էկել էր ու որոշել էր կարգուկանոն հաստատեր երկրում: Շատ խնդալու ու միաժամանակ վա- խենալու էր: Տենց կարող ա լսած լինես, որ փողոցում, ասենք, մարդկանց կանգնացնում էին, ու ստուգում էին: Ասենք, եթե դու ցերեկը 11-ին, ես էդ ժամանակ 18 տարեկան էի, 18 էլ չէ, 17, գնում ես փողոցով ու կանգնացնում ա, ասում ա. «Ո՞ւր ես գնում, էս ինչի՞ դասի կամ գործի չես, դու պիտի դասի կամ գործի լինես»: Հա, արդեն դպրոցը ավարտած էի, գրվել էի Հանրային գրադարան, էդ տոմսը միշտ հետս էի պահում. «Դե գնում եմ գրադարան, հեսա տոմսս»: «Հա, լավ, գնա»: Մտնեիր էդ ժամերին կինո, ցերեկվա ժա- մերին, գալի լուսը վառում էին ու սկսում էին նայել: Ընդեղ տարեց մարդիկ կան, դուք էս կողմ, «հլա արի ստեղ, դու ինչի ես էս ժամին էստեղ»: Կինոն ընդհատում էին, կանգնացնում էին, լուսը վառում էին, սենց աբսուրդ էր ու լավ ա, որ տևեց ինչքան, 82-ի նոյեմբերից մինչև 84 թվի փետրվար: Տարի, տարի ու կես էլ չտևեց, նա էլ վարի գնաց: Էկավ Չեռնենկոն 282 , դե Չեռնենկոն արդեն տեղով անեկդոտ էր: Ու արդեն էնքան բաց էր: Մի հատ հայոց լեզվի դասախոս ունեինք, նենց հումորներ անող մարդ էր, սենց էր անում. էդ «Черненко, который մեռնենկո»: Ու դասախոսը արդեն ամեն ժամ չէր վախում, էլի: Չեռնենկոն մեռավ, ես արդեն բանակում էի: Գորբաչովը... Գորբաչովի գալուց էդ հակաալկոհոլային օրենքը մտավ, մի հատ խնդալու բան էր: Զամպալիտ ունեինք, որը ասենք նախորդ իրիկուն երևի լավ խմել էր, պերեգարի հոտը արդեն գալիս էր, ու ասեց. «ես պարտավոր եմ ձեզ տեղեկացնել, որ պոլիտբյուրոն ընդունել ա մի սարսափելի հիանալի օրենք, այսուհետև խմել չի կարելի, բայց դա ձեզ ա վերաբերվում»: Հետաքրքիր բան էր, էդ օրենքը ընդունվեց, դրանք ավելի շատ սկսեցին խմել, տակից էր էլի, ռեակցիա էր, էլի: Սկսեցին ավելի շատ խմել, սկսեցին արդեն ինչ гадость, իրանք տեղից ինչ гадость ասես, խմում էին. սիվուխա, միվուխա, բռագա, սամոգոն, սենց բաներ, նու ադիկալոնը արդեն չհաշված: Վերջը տենց երկիր էր մեր երկիրը:

Ա.Գ. — Լավ, պարոն Պասկևիչյան, շնորհակալություն:

Տ.Պ. — Խնդրեմ, Արմեն ջան: